

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

14.07.2017թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը, Ս.Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա.Վարդանյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույումջյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն.Բաղդասարյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա.Հարությունյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ.Արևշատյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ.Խաչատրյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Հ.Հովհաննիսյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի առաջին կարգի մասնագետ Հ.Կարապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի առաջին կարգի մասնագետ Ա.Մխիթարյանը:

Նիստում լավեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի փետրվարի 13-ի թիվ 04-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Անանյան /

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի փետրվարի 13-ի «Հաշվետվություն կազմակերպության արդյունաբերական արտադրանքի մասին» Ձև թիվ 1-ԱՐՏ (ամսական), «Հաշվետվություն կազմակերպության արդյունաբերական արտադրանքի մասին» Ձև թիվ 1-ԱՐՏ (եռամսյակային) (փոքր) և «Հաշվետվություն կազմակերպության արդյունաբերական արտադրանքի մասին» Ձև թիվ 1-ԱՐՏ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման ցուցումները հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2011 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 04-Ն և թիվ 05-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 04-Ն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով հաստատված 1-ին, 2-րդ և 3-րդ հավելվածներում «որից՝ ԱՊՀ երկրներում 020.1» տողից հետո լրացնել հետևյալ տողով. «դրանից՝ ԵՏՄ անդամ երկրներում 020.11»: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

/Նորմատիվ /

2. «Իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի», «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի» պետական վիճակագրական հարցաթերթերը և դրանց լրացման հրահանգները ՀՀ ՎՊԽ որոշմամբ հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2012 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 31-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ. Արևշատյան /

Որոշեցին՝

Հաստատել «Իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի մասին» պետական վիճակագրական հարցաթերթը և լրացման հրահանգը համաձայն հավելված 1-ի և 2-ի: «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի մասին» պետական վիճակագրական հարցաթերթը և՝ հարցաթերթի լրացման հրահանգը համաձայն հավելված 3-ի և 4-ի:

Ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի մարտի 14-ի թիվ թիվ 31-Ն որոշումը, սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

/Նորմատիվ /

3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 05-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Հայրապետյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի հունիսի 20-ի «վիճակագրական տեղեկությունների հավաքագրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 11-Ն և 2010 թվականի մայիսի 12-ի թիվ 12-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 05-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 19-րդ կետից հանել «երկու օրինակից» բառերը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

/Նորմատիվ /

4. «ՀՀ ՎՊԽ 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 12, 2015 թվականի նոյեմբերի 09-ի թիվ 21, 20, 2014թ. հուլիսի 4-ի թիվ 26, 27, 29, 30 2012 թվականի հունվարի 27-ի թիվ 01, 02, 2012 թվականի փետրվարի 20-ի թիվ 06, նորմատիվ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և նորերը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Հարությունյան/

Որոշեցին՝

Ուժը կորցրած ճանաչել «ՀՀ ՎՊԽ 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 12, 2015 թվականի նոյեմբերի 09-ի թիվ 21, 20, 2014թ. հուլիսի 4-ի թիվ 26, 27, 29, 30 2012 թվականի հունվարի 27-ի թիվ 01, 02, 2012 թվականի փետրվարի 20-ի թիվ 06, նորմատիվ որոշումները և դրանց փոխարեն հաստատել նորերը:

/Նորմատիվ /

5.«Արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում գրանցված վնասվածքների և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքների մասին» ձև 9 (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

Որոշեցին՝

Հավանություն տալ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում գրանցված վնասվածքների և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքների մասին» Ձև 9 (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին:

/Անհատական/

6. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2015 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան «ԱՎԱԳ Սոլյուշնս» ՍՊ ընկերությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Մարկոսյան/

Որոշեցին՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ «ԱՎԱԳ Սոլյուշնս» ՍՊ ընկերությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2015 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

Լսեցին՝

7. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

7.1 Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Սոչի քաղաքում 2017 թվականի մայիսի 25-ից 26-ը «Արդյունաբերության վիճակագրության կատարելագործումը և վիճակագրական ցուցանիշների մշակումը՝ ԱՊՀ երկրներում արդյունաբերության զարգացման վերլուծության համար» ծրագրի շրջանակում «Արդյունաբերության վիճակագրությունը տարածաշրջանի երկրների կայուն զարգացման համար» տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Հ.Հովհաննիսյան/

7.2 Հաղորդում՝ Ղազախստանի Աստանա քաղաքում 2017 թվականի հունիսի 12-ից 13-ը Էներգիայի միջազգային գործակալության (IEA) կողմից կազմակերպված EU4Energy ծրագրի շրջանակում Էներգետիկ վիճակագրության ցանցային հանդիպում և կայուն էներգետիկ քաղաքականության համաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Հ.Հովհաննիսյան/

7.3 Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2017 թվականի մայիսի 31-ից հունիսի 2-ը «ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի, ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի, Եվրոստատի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից կազմակերպված «Ազգային հաշիվների գծով փորձագետների խմբի» 16-րդ նստաշրջանին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ.Խաչատրյան /

7.4 Հաղորդում՝ Ղազախստանի Ալմաթի քաղաքում 2017 թվականի հունիսի 6-ից 8-ը ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի կողմից կազմակերպված «Հաշմանդամության վիճակագրությունն ու գնահատումն ի աջակցություն կայուն զարգացման 2030թ. օրակարգին ու մարդահամարների և կացարանների հաշվառման 2020թ. ծրագրին» խորագրով տարածաշրջանային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

7.5. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2017 թվականի հունիսի 14-ից 16-ը Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի և Նորվեգիայի վիճակագրության կողմից համատեղ կազմակերպված «Գների վիճակագրությունը Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համար» թեմայով եռօրյա դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Հ.Կարապետյան, Ա.Մխիթարյան/

7.6. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2017 թվականի հունիսի 19-ից 22-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 65-րդ հերթական լիակազմ նստաշրջան և Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներում Կայուն զարգացման նպատակների համար ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ճանապարհային քարտեզի իրականացման վերաբերյալ սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Գ.Գևորգյան, Ա.Սաֆյան, Ա.Մանանդյան/

7.7. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2017 թվականի հունիսի 20-ից 22-ը «Ազգային տրանսֆերային (միջսերնդային) հաշիվներ. սկզբունքներ, մեթոդաբանություն և դրա կառուցման հիմնախնդիրներ» խորագրով գիտակրթական սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ.Կոյունջյան/

7.8. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2017 թվականի հունիսի 27-ից 30-ը «Եվրոպայի Շրջակա միջավայրի մշտադիտարկման և գնահատման աշխատանքային խմբի (ԵՇՄՄԳ) 19-րդ նստաշրջանի» և «Եվրոպայի Շրջակա միջավայրի վիճակագրության և ցուցանիշների միասնական նպատակային խմբի (ԵՇՄՎՑ) 13-րդ նստաշրջանի» աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

7.9. Հաղորդում՝ Չեռնոգորիայի Բուդվա քաղաքում 2017 թվականի հուլիսի 6-ից 7-ը «Եվրոստատի, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի /ԷՖՏԱ/ և Չեռնոգորիայի ազգային վիճակագրական ծառայության կողմից կազմակերպված «Պաշտոնական վիճակագրության մասին մոդելային օրենքի կիրառման փորձի փոխանակում» խորագրով ռազմավարական կառավարման սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/

18.07.2017թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը, Ս.Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա.Վարդանյանը
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն.Բաղդասարյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի N 16-Ն հրամանում փոփոխություն կատարելուն հավանություն տալու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

Որոշեցին՝

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի N 16-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանի նախագծին:

/Անհատական/

Լսեցին՝

1. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում՝ Մարոկկոյի Մարաքեշ քաղաքում 2017 թվականի հուլիսի 14-ից 21-ը Միջազգային վիճակագրական ինստիտուտի (ISI) կողմից կազմակերպված «Պաշտոնական վիճակագրության անկախությունն ու ամբողջականությունը. օգտագործելով գործընկերների փորձագիտական գնահատումները և արտապատկերման գործիքը՝ գնահատել վիճակագրական համակարգի պրոֆեսիոնալ անկախությունն ու այլ տարրերը» խորագրով կարճ դասընթացին և 61-րդ Համաշխարհային Վիճակագրության Կոնգրեսի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա.Սաֆյան /

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/